ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Տասանորդի օրենքը

Երեց Ալեքսեյ Սամայկին
Արևելյան Եվրոպայի Տարածաշրջանի Նախագահության երկրորդ խորհրդական

Երեց Ալեքսեյ Սամայկին

Հին ժամանակներից սկսած Տերն անդադար ուղղորդել է Իր ժողովրդին և Իր Եկեղեցին, տալով անհրաժեշտ պատվիրաններն ու օրենքները իր ընտրյալ խոսնակների միջոցով (2 Նեփի 3.17): Այդ օրենքներից մեկը գործում է նաև մեր օրերում. դա տասանորդի օրենքն է: Նույնիսկ Հին Կտակարանի ժամանակներում մարգարեներն ուսուցանում էին այս օրենքի սրբության և կարևորության մասին. «Եւ երկրի բոլոր տասանորդը՝ երկրի հունտերիցը եւ ծառերի պտուղիցը՝ Եհովայինն է. Նա սուրբ է Եհովայի համար» (Ղևտացոց 27.30): Փրկիչն ինքը, Իր Հարությունից հետո հայտնվելով նեփիացիներին, հիշեցրեց նրանց այս օրենքի մասին, պատվիրելով գրի առնել Մաղաքիայի խոսքերը իր ժամանակագրության մեջ. «Մի՞թե մարդ կկողոպտի Աստծուն: Սակայն դուք կողոպտել եք ինձ: Բայց դուք ասում եք. Ի՞նչ բանում ենք մենք կողոպտել քեզ: Տասանորդներում և ընծաներում: Դուք անիծված եք անեծքով, քանզի դուք կողոպտել եք ինձ, նույնիսկ այս ամբողջ ազգը: Բերեք ձեր բոլոր տասանորդները շտեմարան, որպեսզի իմ տանն ուտելիք լինի. և դրանով ստուգեք ինձ հիմա, ասում է Զորաց Տերը, թե արդյոք ձեր համար չե՞մ բացի երկնքի պատուհանները, և դուրս չե՞մ թափի ձեզ համար օրհնություն, այնպես որ բավականաչափ տեղ չլինի՝ ընդունելու այն» (3 Նեփի 24.8–10): 1831 թվականին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը կրկին հիշեցրեց Իր Եկեղեցու մարդկանց այս օրենքի կարևորության մասին: «Ահա, ներկան կոչվում է այսօր, մինչև Մարդու Որդու գալուստը, և ճշմարիտ որ, սա զոհաբերության օր է, և իմ ժողովրդի տասանորդը տալու օր. քանզի նա, ով տասանորդ է տալիս, չի այրվի նրա գալստի ժամանակ» (Վարդապետություն և Ուխտեր 64.23): Ներկայումս ժամանակակից մարգարեներն ու առաքյալները նույնպես հորդորում են մեզ ապրել այս օրենքով:

Տասանորդի օրենքը հավերժական օրենք է, որն ուսուցանում է մեր կյանքում Տիրոջը դնել առաջին տեղում: Իր ժողովրդին տալով այս օրենքը, Տերը նաև խոստում է տվել: Պահելով տասանորդի օրենքը, մենք ամրացնում ենք մեր հավատքը, զարգացնում հոգևորություն և հոգևոր ունակություններ, և մեր վկայությունը դարձնում անսասան: Մի կողմից, մենք պատշաճ արտահայտում ենք մեր երախտագիտությունը այն լիության համար, որն ունենք: Մյուս կողմից, մենք ցուցադրում ենք Երկրի վրա Տիրոջ աշխատանքի համար զոհաբերելու մեր պատրաստակամությունը: Երկու դեպքերում էլ դա միշտ կլինի մի քայլ, որը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ անկեղծ սիրո և Նրա ավետարանի հանդեպ նվիրվածության վրա: Եվ հավատքի այս քայլը, անկասկած, ազդում է ինչպես մեր ապագայի, այնպես էլ մեր ներկայի վրա: Նախագահ Հովարդ Վ. Հանթերն իր ժամանակին ուսուցանել է. «Մենք հետևում ենք Տիրոջ կողմից մեզ տրված բարության Իր բաժինը վերադարձնելու սկզբունքին, և այդ բաժինը տասանորդն է: Տասանորդի վճարումն . . . ամբողջովին կամավոր է: Մենք կարող ենք վճարել կամ չվճարել տասանորդ: Նրանք, ովքեր վճարում են, ստանում են օրհնություններ, որոնք հայտնի չեն ուրիշներին» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Հովարդ Վ. Հանթեր, գլուխ 9, «Տասանորդի օրենքը»):

Այս ճշմարտությունը շատ լավ էր հասկանում Մերի Ֆիլդինգ Սմիթը: Նա Մարգարե Ջոզեֆ Սմիթի եղբոր՝ Հայրապետ Հայրում Սմիթի կինն էր, իսկ ավելի ուշ՝

այրին: Մի օր, բացատրելով, թե ինչպես է հասկանում տասանորդի օրենքը, Մերի Ֆիլդինգ Սմիթը հայտարարեց. «Եթե ես չվճարեմ իմ տասանորդը, ես պետք է ակնկալեմ, որ Տերը ինձնից կհեռացնի Իր օրհնությունները: Ես վճարում եմ իմ տասանորդը ոչ միայն նրա համար, որ դա Աստծո օրենքն է, այլև ես օրհնություններ եմ ակնկալում՝ վճարելով այն: Այս և ուրիշ օրենքները պահելով, ես ակնկալում եմ բարգավաճում և իմ ընտանիքին աջակցելու կարողություն» (Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ, *Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքը* [Salt Lake City, 1938], 158–59): Չնայած տասանորդ վճարելու օրհնությունները բազմազան են և խիստ անձնական, մի բան հաստատ է՝ տասանորդի օրենքի մասին վկայությունը ստանում ենք այդ օրենքով ապրելով:

Ելնելով իմ անձնական փորձառությունից, ես վստահ կարող եմ ասել, որ ապրելով տասանորդի օրենքով, մենք կնկատենք, թե ինչպես է աճում և ամրանում մեր հավատքը: Երկնքի հատուկ օրհնությունները միշտ կուղեկցեն մեզ մեր կյանքում: Կաճի մեր վստահությունը մեր կարողության հանդեպ, որով կկարողանանք ապահովել մեր ընտանիքի անդամների կարիքները: Եվ այս ամենը կհանգեցնի նրան, որ մենք կհասկանանք, թե ինչու չենք կարող չվճարել տասանորդ: ■

ՏԵՂԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տասանորդը պատվիրան է մեզ համար

Քույր Սեդա Մամաջանյան
Վանաձոր ճյուղ, Հայաստան/Վրաստան միսիա

Աստծո Արքայություն մտնելու համար կարևորագույն պատվիրաններից և ուխտերից մեկն է տասանորդի վճարումը:

Այս պատվիրանը կամ ուխտը պահելու համար անհրաժեշտ են երեք բան.

1. Հավատք
2. Ազնվություն
3. Վստահություն

Ես հավատում եմ, որ Աստված կա, ապրում է, և Նրա թագավորությունը երկրի վրա կառուցելու համար հարկավոր է, որ մենք՝ առաջնորդվելով Ավետարանի ուղերձներով, «Աստծունը տանք Աստծուն»:

Դրանով իսկ հավատում եմ, որ, վճարելով տասանորդը, ես մասնակցում եմ Աստծո Արքայության կառուցմանը երկրի վրա:

Ես վստահորեն ասում եմ, որ տասանորդի գումարներով կառուցվում են աղոթատներ, տաճարներ, հրատարակվում են Սուրբ Գրություններ և ապահովվում է ամեն ինչ, ինչ հարկավոր է Իսրայելի հավաքմանը:

Ես երջանիկ եմ, որ ես մասնակցում եմ այդ, գործընթացին՝ օգնելով իմ սիրելի Երկնային Հորը և նաև ինձ համար, որ վերջին օրը, երբ ես հանդիպեմ Նրան՝ չեմ ամաչի, այլ գլուխս բարձր կնայեմ Նրա աչքերին ու կասեմ՝ այո՛, ես սրտանց և ազնվորեն վճարել եմ իմ տասանորդը և պահել եմ իմ ուխտը ազնվորեն:

Մամաջանյան ընտանիք (Հայաստան)

Տասանորդը լրիվ և ազնիվ վճարելու հետևանքով ես և իմ ընտանիքը ստացել ենք երկու տեսակի օրհնություններ.

1. Հոգևոր և 2. Ֆինանսական:

Երբ ես վճարեցի իմ տասանորդը իմ չնչին, ատ փոքր աշխատավարձի, Աստված կատարեց Իր խոստումը՝ ապահովեց ինձ հիմնական աշխատանքով, հանեց իմ ընտանիքը կարիքավոր վիճակից:

Աստված երկար սպասեցնել չի տալիս:

Երբ մենք պահում ենք մեր ուխտերը և մնում ենք պատվիրանների մեջ՝ կատարելով մեր մասը, Աստված էլ կատարում է Իր մասը՝ օրհնելով մեզ հզոր հավատքով և բարգավաճեցնելով երկրի վրա: 1Նեփի 4:14 – ում, 2Նեփի 1:31–32 – ում և բազմաթիվ այլ հատվածներ կան, ուր խոսվում է այն մասին, որ պատվիրանների պահելը օրհնում է Աստծո ժողովրդին բարեկեցությամբ:

Իմ կոչ-խնդրանքն եմ ուղղում իմ բոլոր քույր և եղբայրներին, հատկապես նրանց, ովքեր մտածում են, որ իրենք կարիքավոր են, որ նրանք հավատք ներ դնեն՝ պահելու իրենց ուխտերը.

1. բարոյականության օրենքը
2. Տասանորդի օրենքը
3. Կիրակին սուրբ պահելու ուխտը և
4. Իմաստության խոսքի օրենքը:

Ներ դնենք հավատք և վստահենք Աստծուն, պահենք ուխտերը և ստանանք Արքայության փառքն ու պսակը:

Ես վկայում եմ, որ այս ամենը ճիշտ է: Հիսուս Քրիստոսի սուրբ անո ■

Իվան Յոսիֆով (Բուլղարիա)

Տասանորդ վճարելու իմ փորձառությունը

Իվան Յոսիֆով

Բուլղարիա/Կենտրոնական Եվրասիայի Միսիայի Ռուսե ճյուղի նախագահ

Իմ մկրտությունից կարճ ժամանակ անց միսիոներների հետ ես մասնակցեցի մի դասի: Մենք սկսեցինք՝ կարդալով Նոր Կտակարանի մի պատմություն, որում պատմվում է, թե ինչպես մարդիկ, ովքեր ստանում էին երկդրամեանը տաճարի համար, մոտենում էին Հիսուս Քրիստոսին և Պետրոսին: Քանի որ նրանք ոչինչ չունեին վճարելու, Փրկիչը հանձնարարեց Պետրոսին գնալ ծով, գցել կարթը: Եվ առաջին ձուկը, որը նա կբռներ, կուլ էր տվել այն փողը, որով նրանք կարող էին վճարել տաճար մտնելու համար (Մատթեոս 17.24–27): Դրանից հետո միսիոներները հարցրին ինձ. «Քանի որ Աստված գիտե, թե որտեղ են աշխարհի հարստությունները, ինչո՞ւ է Նա ցանկանում, որ մենք՝ անդամներս, տասանորդ վճարենք»: Ապա նրանք բացատրեցին, որ տասանորդը հավատքի խնդիր է:

Այս ճշմարտությունը վերահաստատվեց ինձ համար, երբ ես կանչվեցի ճյուղի գործավար: Այդ ժամանակ Ռուսե ճյուղի նախագահ Դանեվը կանչեց ինձ իր աշխատասենյակ, որպեսզի ցույց տա, թե ինչպես կատարեմ իմ պարտականությունները: Սեղանին դրված էին մի քանի ծրարներ տասանորդներով և նվիրատվություններով: Երբ մենք բացեցինք դրանք, նախագահ Դանեվն ասաց ինձ, որ դա պարզապես փող չէ, այլ անդամների հավատքի արտացոլումը: Ես երբեք չեմ մոռանա այդ դասը:

Իմ մասին կարող եմ ասել, որ տասանորդի վճարումը ինձ համար երբեք դժվար պատվիրան չի եղել: Ես սիրում եմ տասանորդ վճարել: Ես դա անում եմ ուրախ սրտով, քանի որ գիտեմ, որ օգնում եմ կառուցել Աստծո թագավորությունն այստեղ՝ Երկրի վրա: Ես կարծում եմ, որ ազնվորեն վճարելով տասանորդը, ցույց ենք տալիս Տիրոջը, որ մենք կարող են 100%-ով պահել Նրա պատվիրանները:

Տասանորդը ցույց է տալիս, որ մենք բոլորս հավասար ենք Աստծո առաջ: Անկախ նրանից՝ մեր տասանորդը մեծ է, թե փոքր, եթե մենք վճարում ենք ազնիվ տասանորդ, ստանում ենք այս պատվիրանի բոլոր օրհնությունները:

Ես վստահ եմ, որ շատ մարդիկ անսպասելի օրհնություններ կստանան այս պատվիրանը պահելու արդյունքում, եթե նրանք պարզապես հավատք գործադրեն և Տիրոջը դնեն առաջին տեղում: Ես գիտեմ, որ շատ մարդկանցից մեծ զոհաբերություններ կպահանջվեն, բայց եկեք չմոռանանք, որ Տերը երբեք չի մոռանում մեզ և առատորեն կօրհնի մեզ (Մաղաքիա 3.10):

Երբ մենք Տիրոջն ենք վճարում մեր եկամուտի մեկ տասներորդը, մենք բառացիորեն հագնում ենք Սարեփթացի այրու կոշիկները: Ինչպես նրա սափորի ալյուրը երբեք չվերջացավ և կուժից յուղը երբեք չպակասեց, այդպես էլ Տերը հոգ կտանի մեր կարիքների մասին (Գ Թագավորաց 17.16):

Ես գիտեմ, որ տասանորդը հոգևոր զորության և վստահության աղբյուր է ու նաև մեր մեջ եսասիրությունը զսպելու լավագույն եղանակներից մեկը: ■

Այրի կնոջ լուման

Մինե Ասկան

Ստամբուլի առաջին ճյուղ

Ես մկրտվել եմ Մալթայում ամուսնուս և երեք որդիներիս հետ 1994թ. մայիսի 7-ին: Մեկ տարի անց մենք սկսեցինք նախապատրաստվել տաճար գնալուն: Մենք շատ աղքատ էինք և չէինք կարող տասանորդ վճարել և իհարկե, չէինք կարող գնալ տաճար: Երեք տարի անց իմ ամուսինն ու որդիները հեռացան Եկեղեցուց: Ես մենակ էի Եկեղեցում, բայց մեծ ցանկություն ունեի գնալ Սոլթ Լեյք Սիթի Տաճար:

2003թ. ես և ամուսինս վերադարձանք Ստամբուլ: Որդիներս գնացին Անգլիա: Ամուսինս անցավ թոշակի և շատ քիչ գումար էր վաստակում, իսկ ես նստած էի տանը: Այդ գումարը չէր բավականացնում մեր կարիքների համար: Ամուսինս ակտիվ չէր եկեղեցում և մենք դեռ տասանորդ չէինք վճարում: Երեք տարի անց՝ 2006 թվականին, ամուսինս մահացավ: Ես սկսեցի ստանալ նրա թոշակը, բայց դա ավելի քիչ էր, քան նա էր ստանում: Այժմ ես հնարավորություն ունեի վճարելու իմ տասանորդը և ես սկսեցի վճարել: Ամուսնուս մահից հետո իմ կրտսեր որդին եկավ Ստամբուլ: Տանը նորից երկու հոգի էինք: Ես շատ քիչ գումար էի ստանում, բայց ինչ-որ ձևով այն բավականացնում էր մեր կարիքների համար: Ես նկատեցի, որ մենք միշտ բավականաչափ գումար ունեինք մեր կարիքների համար, և շատ երախտապարտ ու երջանիկ էի: Հիրավի, Տերը բացել էր Իր պատուհանները մեզ համար:

2008 թվականին մի զույգ Յուտայից եկավ Ստամբուլ: Թարան և Քեվինը երեք օր մնացին այստեղ, և մենք լավ ընկերներ դարձանք: Երբ նրանք վերադարձան Ամերիկա, ինձ հրավիրեցին Սոլթ Լեյք Սիթի: Նրանք իսկապես ցանկանում էին, որ ես այցելեմ իրենց: 2008թ. հոկտեմբերին ես գնացի Միացյալ Նահանգներ՝ այցելելու նրանց: Թարան ամեն ինչ հրաշալի էր կազմակերպել: Այնտեղ ես այցելեցի վեց տաճարներ (Սոլթ Լեյք, Բաունթիֆուլ, Լոգան, Օգդեն, Պրովո, Մանթի): Իմ երազանքն իրականություն դարձավ:

2012թ.՝ ինը տարի փնտրելուց հետո, ես վերջապես ուսուցչի աշխատանք գտա Ստամբուլի Համալսարանում և սկսեցի վճարել իմ երկրորդ տասանորդը: Այս անգամ ես մեծ ցանկություն ունեի տեսնելու Եվրոպայի բոլոր տաճարները և գումար խնայեցի դրա համար: Նախ ես այցելեցի Կիևի տաճար, հետո՝ Շվեյցարիա Բերն տաճար, Անգլիա Պրեստոն և Լոնդոն տաճար (3 անգամ): Ես դեռ ցանկանում եմ այցելել Գերմանիայի, Իսպանիայի տաճարները և Հռոմի նոր տաճարը Իտալիայում:

2018թ. Թարան և Քեվինը նորից երեք օրով այցելեցին ինձ Թուրքիայում: Քեվինը իմ որդուն և ինձ ասաց, որ ինքը նախկինում երբևէ գործի բերումով չէր ճամփորդել Ամերիկայից դուրս: 2008թ. նրա ղեկավարը չկարողացավ գալ Ստամբուլ, ուստի ուղարկեց Քեվինին. ահա ինչպես Քեվինն ու Թարան հանդիպեցին ինձ այստեղ: Քեվինն իր ղեկավարին ասել էր ինձ Ամերիկայի տաճարներ տանելու իրենց ցանկության մասին: Ավելի ուշ, Քեվինը փոխեց իր աշխատանքը: Երկար ժամանակ անց Քեվինն ու իր նախկին ղեկավարը կրկին հանդիպեցին: Քեվինը նրան պատմեց Ամերիկա կատարած իմ ուղևորության մասին, և թե ինչպես էի ես այցելել մի քանի տաճարներ: Նրա նախկին ղեկավարն ասել էր. «Գիտե՞ս, թե դու ինչի համար էիր գնացել Ստամբուլ: Ես 40 հազար դոլար էի ծախսել այդ ուղևորության համար, և այն նպատակին չծառայեց: Սակայն, ես կարծում եմ, որ այդ ամենը նրա համար էր, որ Մինեն գնար տաճար»:

Իմ ամուսնու մահից հետո ես վճարում եմ լիարժեք տասանորդ: Սա իմ տասանորդի օրհնությունների կարճ պատմությունն է: Ես չեմ համարձակվում չվճարել իմ տասանորդը, քանի որ գիտեմ, որ ճշմարիտ են **Մաղաքիա 3.10** սուրբ գրության հատվածի խոսքերը. *«Բոլոր տասանորդը տարէք գանձատունը, որ իմ տանը պաշար լինի. Եւ ինձ մէկ փորձեցէք սորանով, ասում է Զօրաց Տէրը, թէ արդեօք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները եւ օրհնութիւն թափել ձեզ համար՝ մինչեւ որ նորա համար տեղ չլինի»:*

Ես գիտեմ, որ սա Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին է: Ամեն: ■

Մինե Ասկանը և նրա ամուսինը (Թուրքիա)

Լիարժեք տասանորդ վճարելու շնորհիվ

Գարիկ և Արմանուշ Գալդունց
Աջափնյակ ճյուղ, Հայաստան/Վրաստան միսիա

Մաղաքիա Գ.10

Բոլոր տասանորդը տարեք գանձատունը, որ իմ տանը պաշար լինի. և ինձ մեկ փորձեցեք սորանով, ասում է Զորաց Տերը, թե արդյոք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափել ձեզ համար՝ մինչև որ նորա համար տեղ չլինի:

Երբ առաջին անգամ որպես հյուր եկեղեցի գնացինք, այնտեղ լսեցինք մի անդամի վկայություն տասանորդի մասին, և հենց դա էլ եղավ այն սերմը, որը ընկավ մեր սրտի մեջ և սկսեց ուռչել:

Վերջին Օրերի Եկեղեցու անդամը պատմում էր, որ չորս տարի լիարժեք տասանորդ վճարելու շնորհիվ, նա այնքան էր օրհնվել, որ չորս տարի հետո վճարում էր այնքան տասանորդ, որքան եկամուտ ուներ չորս տարի առաջ:

Այդ ժամանակ մեր ընտանիքը շատ ծանր ֆինանսական վիճակում էր գտնվում՝ մենք վարձով էինք ապրում, ամուսինս փոքր գումար էր աշխատում և գործատուները գնալով ավելի քիչ էին կանչում աշխատանքի, ավելի պակասեցնելով նրա եկամուտը: Ես նունպես շատ փոքր գումարի դիմաց աշխատում էի երկար ժամեր մի խմորեղենի արտադրամասում, որտեղ պայմանները շատ վատն էին և նույնիսկ առողջությունս էր վտանգվել: Մեր երկու անչափահաս երեխաները դպրոցի ավարտական դասարաններում էին սովորում: Մի կողմից ավարտական դրամահավաքները, մյուս կողմից նրանց լրացուցիչ պարապմունքների վճարները. . . մենք ուղղակի չէինք հասցնում վաստակել:

Այդ վկայությունը լսելով, որոշեցինք անմիջապես մոտենալ եկեղեցու նախագահին և իմանալ թե ինչպես պետք է վճարենք այդ տասանորդը, որպեսզի մեր եկամուտը նույնպես տասնապատկվեր: Նախագահից մենք իմացանք, որ նախ պետք էր եկեղեցու անդամ դառնալ: Եվ կարծում եմ, որ հենց դա էլ եղավ մեր եկեղեցուն միանալու պատճառը:

Մկրտվելուն պես վճարեցինք մեր առաջին տասանորդը և կամաց-կամաց սկսեցինք ճաշակել Երկնային Հոր խոստացած օրհնություններից:

Մեզանից ժամանակ պահանջվեց մինչև սովորեցինք ինչպես էր պետք կողքի դնել տասանորդի գումարը: Սկզբում մենք անում էինք մեր ամսվա կարևոր վճարումները և հետո հաշվում թե ինչքան գումար մնաց տասանորդի համար: Մի անգամ այդ սխալ հաշվարկելու պատճառով իմ գումարը չբավականացրեց և ես հազար դրամ պակաս վճարեցի տասանորդ: Դրանից երկու օր անց իմ գործատուն զանգահարեց և ասաց, որ ազատված եմ աշխատանքից: Ի զարմանս ինձ, այդ լուրը շատ հանգիստ ընդունեցի և շնորհակալություն հայտնելով կախեցի լսափողը: Կարծես գիտեի թե ինչու դա եղավ: Մեկ ու կես ամիս աշխատանք փնտրելուց հետո մտածեցի, որ նախ պիտի պակաս վճարածս տասանորդը լրացնեմ: Ամուսնուցս խնդրեցի հազար դրամ և վճարեցի այն': Այդ նույն օրը եկեղեցուց տուն վերադառնալուն պես զանգ ստացա: Դա նոր աշխատանքի առաջարկ էր:

Այդուհետև մենք սկսեցինք աշխատավարձ ստանալուն պես առաջինը տասանորդի գումարը կողքի դնել և շուտով հասկացանք, որ այդպես անելով մեր գումարները բավականացնում էին ամեն ինչի:

Լիարժեք տասանորդ վճարելու շնորհիվ, ամուսինս նույնպես ժամանակի ընթացքում փոխեց իր աշխատանքը, այդպիսով ազատվելով ցածր վարձատրվող, դժվար աշխատանքից, ունենալով ավելի լավ աշխատանք, և տարեց տարի ավելացնելով իր եկամուտը:

Լիարժեք տասանորդ վճարելու շնորհիվ մեր որդին օրհնվեց միաժամկետ միսիա ծառայելու հնարավորությամբ: Նա իր վկայությունն էր գրել մինչ ծառայում էր, ասելով, որ տասանորդի պատվիրանը օրհնել է իրեն ծառայել ու ապրել մի քաղաքում, որը մանկուց սիրել էր ու նույնիսկ վախեցել երազել մի օր այնտեղ լինելու մասին:

Գալդունց ընտանիք (Հայաստան)

Հետագայում նաև մեր դուստրը լիարժեք տասանորդ վճարելու շնորհիվ ունեցավ լավ աշխատանք և կարողացավ իր ուժերով ավարտել կիսատ թողած ուսումը:

Իսկ այժմ մեր թոռնիկը տեսնելով տասանորդ վճարելու մեր օրինակը և թե ինչքան մեծ սիրով ու ոգևորությամբ ենք դա անում, նա ևս մտածում է ուղիներ գտնել, գումար վաստակել, որպեսզի ինքն էլ իր տասանորդը վճարի:

Ազնվորեն ու ճշգրիտ տասանորդ վճարելու շնորհիվ մեր ընտանիքը քսանմեկ երկար ու ձիգ տարիների ընթացքում վարձով ապրելուց և տնից տուն անընդհատ տեղափոխվելուց հետո, վերջապես կարողացավ ունենալ իր սեփական տունը:

Լիարժեք տասանորդ վճարելու շնորհիվ մենք համոզվեցինք մեր եկեղեցում լսած առաջին վկայության ճշմարտացիությանը և մենք ևս օրհնվեցինք մեր եկամուտների տարեց տարի ավելանալով:

Մեր սրտում ուռչող սերմը ծիլ տվեց, աճեց ու մեծանալով դարձավ մի մեծ ծառ:

Շատ ենք սիրում կարդալ Մաղաքիայի գրքից հերևյալ խոսքերը.

Մաղաքիա Գ.10

Բոլոր տասանորդը տարեք գանձատունը, որ իմ տանը պաշար լինի. և ինձ մեկ փորձեցեք սորանով, ասում է Զորաց Տերը, թե արդյոք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափել ձեզ համար՝ մինչև որ նորա համար տեղ չլինի:

Այս խոսքերը իրական են և մենք դրա վկաներն ենք: Վերը նշված օրհնությունները և նաև օրհնություններ, որոնք անձնական են և չեն կարող բարձրաձայնվել մենք ստացել և շարունակում ենք ստանալ լիարժեք տասանորդ վճարելու շնորհիվ: ■

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին նշում է 189-րդ տարեդարձը

Դետելինա Չոբանովա
Բուլղարիայի/Կենտրոնական Եվրասիայի Միսիայի ՀԿ հանձնաժողովի նախագահ

2019թ. ապրիլի 6-ին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին տոնեց իր հիմնադրման 189-րդ տարեդարձը: Տոնակատարությունը տեղի ունեցավ Սոֆիայի Եկեղեցու հավաքատանը: Միջոցառմանը մասնակցում էին հյուրեր ՀԿ-ներից և կրթական կազմակերպություններից: Հյուրերի թվում էին ներկայացուցիչներ Գրադարանային Ուսումնասիրությունների և Տեղեկատվական Տեխնոլոգիաների Համալսարանից, Ադվենտիստների եկեղեցուց և Կամուրջներ ոչ-կառավարական կազմակերպությունից: Եկեղեցու անդամներն ու միսիոներները ողջունեցին հյուրերին՝ կատարելով վոկալ և գործիքային երաժշտական համարներ:

Բուլղարիայի/Կենտրոնական Եվրասիայի Միսիայի նախագահ Սթիվեն Դեյվիսը կիսվեց հետաքրքիր փաստերով Եկեղեցու մասին ողջ աշխարհում և Բուլղարիայում:

Նախագահ Դեյվիսը ելույթ է ունենում տարեդարձի տոնակատարությանը

Ելույթ են ունենում միսիոներները

Ներկայումս Եկեղեցին ունի 16.1 միլիոն անդամ 30,506 համայնքներում և նրա սուրբ գրությունները հրատարակվում են 188 լեզուներով: Կան 201 կառուցված տաճարներ, որոնցից 162-ը գործող տաճարներ են:

Նախագահ Դեյվիսը հայտարարեց, որ միսիոներական ծրագիրը Եկեղեցու բնորոշ առանձնահատկություններից է. 65000 միսիոներների կարելի է տեսնել հարյուրավոր քաղաքների փողոցներում:

Նա խոսեց նաև Եկեղեցու մարդասիրական ծրագրերի մասին: 1985 թվականից սկսած 139 երկրներ ամբողջ աշխարհում ստացել են մարդասիրական օգնություն և նվիրատվությունների 100%-ը օգտագործվում է մարդասիրական գործունեության համար:

Նախագահ Դեյվիսն ասաց, որ Եկեղեցու կրթական ծրագիրը խթանում է անդամների աշխարհիկ և հոգևոր կրթությունը նրանց ամբողջ կյանքի ընթացքում:

Բուլղարիայի Եկեղեցու նախագահ Կրասիմիր Կոլարովի ելույթը նույնպես հետաքրքիր էր: Նա ներկայացրեց Եկեղեցու կազմակերպչական կառուցվածքը և շեշտեց, որ Եկեղեցու անդամները անվճար ծառայում են տարբեր կոչումներում և հանդես են գալիս նաև որպես կամավորներ: Նա նաև հստակեցրեց որոշ աշխարհիկ սխալ ենթադրություններ Եկեղեցու որոշ համոզմունքների և գործառությունների վերաբերյալ:

Ավանդականորեն, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հիմնադրման 189-րդ տարեդարձի տոնակատարությունն ավարտվեց ոչ պաշտոնական զրույցներով և ապագայում համագործակցության ու ընկերակցության նոր ծրագրեր սկսելու առաջարկներով: ■

Երիտասարդների համաժողով 2018

Էլլի Պանայոտովա

2018թ. հուլիսի 18-ից 21-ը Ելենա քաղաքում տեղի ունեցավ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Երիտասարդների համարժողովը: Երիտասարդները ամբողջ երկրից հավաքվել էին միասին՝ ավետարանում աճելու համար:

Համաժողովի թեման էր՝ «Խաղաղություն Քրիստոսում»: Համաժողովին ներկա էին նաև Բուլղարիա/Կենտրոնական Եվրասիայի Միսիայի նախագահ Դեյվիսը և նրա կինը:

Քննարկվող թեմաներն էին՝ Խաղաղություն տաճարում, Ինքնապահովում, Ժամադրություն և հավերժական ամուսնություն, Ինչպես վարվել Եկեղեցուն հակասող տեղեկատվության հետ:

Քույր Էլլի Պանայոտովան՝ Պլեվենից կիսվել է երիտասարդների համաժողովի մասին իր զգացումներով.

«Նախագահ Դեյվիսի հետ մենք ունեցանք լավագույն հոգևոր երեկոներից մեկը: Նա հորդորեց նպատակ դնել կյանքի տեսլականը կազմելու համար: Ես կկամենայի

Էլլի Պանայոտովա (Բուլղարիա)

կիսվել իմ տեսլականով: Առաջին բանը, որը ես կանեմ, միսիայի համար հոգևորապես պատրաստվելն է: Երկրորդ՝ կստանամ իմ հայրապետական օրհնությունը: Միսիայում ծառայելուց հետո ես կկամենայի ամուսնանալ տաճարում: Ես իմացա, որ եթե կատարեմ իմ բաժինը, Երկնային Հայրը կօրհնի ինձ բոլոր բաներում: Կկամենայի ասել, որ ես սիրում եմ բոլոր երիտասարդներին: Ես կկամենայի խրախուսել նրանց՝ աջակցել միմյանց և նպաստել Տիրոջ գործի աճին»: ■

Երիտասարդների համաժողով (Բուլղարիա)

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին անցկացրել է ճյուղի միջոցառում

Կանչո Դիմիտրով
Սթարա Զագորա ճյուղի նախագահության առաջին խորհրդական

Ճյուղի միջոցառում (Բուլղարիա)

2019թ. մարտի 16-ին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Յամբոլ խմբի (որն ընդգրկում է նաև Սլիվեն, Յամբոլ և Հասկովո խմբերը) հավաքատանն անցկացվեց միջոցառում, որի ժամանակ անդամները ծանոթացան Սթարա Զագորա ճյուղի անդամների ծննդավայրերի հետ:

Միջոցառումը սկսվեց Սթարա Զագորա ճյուղի նախագահ Սքոթ Սայթսի ողջույնի խոսքով:

Ճյուղի նախագահության առաջին խորհրդական Եղբայր Կանչո Դիմիտրովը կիսվեց հոգևոր ուղերձով, որը ներառում էր սուրբ գրություններ, որոնք խաղի տեսքով ներկայացվեցին միսիոներների մասնակցությամբ: Հովհաննես 10.27 հատվածից մենք սովորում ենք, որ որքան մոտ ենք Քրիստոսին, այնքան հեշտ է հետևել Նրա ձայնին: Եփեսացիս 4.1–12 հատվածներից սովորում ենք, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ տարբեր հանձնարարություններ ունի կատարելու, բայց նպատակն այն է, որ բոլորը կատարելագործվում են Քրիստոսով: Ժողովող 4.9–10 հատվածներից սովորում ենք թիմային աշխատանքի և ընկերության կարևորության մասին: Մատթեոս 7.12 հատվածից սովորում ենք, որ մենք օրհնվում ենք, երբ օգնում ենք մեկ ուրիշին:

Հոգևոր մասից հետո Եկեղեցու անդամները ներկայացրին այն քաղաքներն ու երկրները, որտեղ իրենք ծնվել են: Նրանք խոսեցին իրենց ծննդավայրի պատմության, աշխարհագրության և տեսարժան վայրերի մասին:

Այնուհետև եղավ հյուրասիրություն, որի ընթացքում բոլորը հնարավորություն ունեցան ավելի լավ ծանոթանալ միմյանց հետ: ■

Վերջին Օրերի Սրբերի համերգը Հասկովոյի Ծերանոցում

Դելյանա Պեյկովա
Բուլղարիայի/Կենտրոնական Եվրասիայի Միսիայի ՀԿ հանձնաժողովի անդամ

2019թ. ապրիլի 20-ին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Հասկովոյի խմբի անդամները Զատիկի առթիվ համերգ տվեցին Հասկովոյի Քենանա Ծերանոցի տարեցների համար: Այցելուների թվում էին երկու միսիոներներ, ովքեր ծառայում են Սթարա Զագորա ճյուղում:

Խմբի ղեկավար Ալեքս Անգելովը ողջույնի խոսք ասաց Ծերանոցի բնակիչներին, որից հետո Եկեղեցու անդամները երգեցին ութ օրհներգ, արտահայտելով իրենց նվիրվածությունը Փրկիչ Հիսուս Քրիստոսին և Նրա Հարությանը:

Համերգի վերջում անդամները հրաշալի հնարավորություն ունեցան հանդիպելու բոլոր տարեցների հետ, ովքեր կիսվեցին միջոցառումից ստացած իրենց տպավորություններով: ■

Համերգ (Բուլղարիա)

ARMENIAN